

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

18 հունիսի, 2020 N 32

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՉԱՓԱՐ ԵՎ ԳԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **ո ղ ո շ ու մ ե մ**.

1. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Չափար և Գետավան համայնքներում կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Մարտակերտի շրջանի Չափար և Գետավան համայնքների վարչական սահմաններ մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի, Դրմբոն-Վարդենիս ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերի.

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված Չափար և Գետավան համայնքների վարչական սահմաններ մուտք գործելու սահմանափակման համար բացառություն սահմանել մինչև 2020 թվականի հունիսի 19-ը՝ ժամը 12:00-ն՝ թույլատրելով Չափար և Գետավան համայնքներում մշտական բնակության իրավունք ունեցող կամ փաստացի բնակվող անձանց մուտքը.

3) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ոստիկանության կողմից սահմանված վայրերում տեղադրել հատուկ անցակետեր՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

4) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված՝ Դրմբոն-Վարդենիս ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության վերահսկման նպատակով ԱՀ ոստիկանության կողմից Գետավան համայնքի ներսում սահմանել վերակարգեր և բացառել երթևեկող տրանսպորտային միջոցների կանգ առնելը Գետավան համայնքի վարչական սահմաններում:

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարին, Չափար և Գետավան համայնքների ղեկավարներին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 14:00-ին:


 Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ